

ԱՄԷՐ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎԷ ԱՐՄԷՆ

ԽՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 5

22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Խնկածներ. — «Շուշին Յանկուրիւնը

Նոր Հարսին

Արիարարանութիւն

Լիւսին Իսկալը

Սիրոյ Բնագանցութիւնը. ԶԱՐԵԶ ՆԵՄՅԷ

Այլազովսիի Ծովանկարին Սոչեւ

Նոնիները

Ֆրանսուա Գօբլի Թասէրական Սկզբնաւորութիւնք

Գեղարուեստական Յուցանանդէս մը

Մասիսի Համայնագիտական Էջը

Տպագրութեան Պատմութիւնը

ԵՆՈՎԷ ԱՐՄԷՆ:

ՄԿՐՏԻՋ ԱՃԷՄԵԱՆ

Յ. ԱԼՓԻԱՐ

ՄԻԶՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ԱՐՁՈՒՐ ՇՕՐԷՆԶԱՌՈՒԷՐ-Ի

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

ԱՇՈՏ Բ. ՔԷԶԵԱՆ

ՖՐԱՆՍՈՒԱ ԳՕՐԷ

ԽՄԲ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏԳՍ.Գ.Ր. ՃԻՀԱՆ

1907

ԿԱՂԱՆԴԻ ԱՌԻԹՈՎ
ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆՈՒԵՐՆԵՐ ԵՆ

Աղջիկներու համար՝

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱՅ ԴԵՌԱՏԻ ԱՂԶԻԿ ՄԸ

Մանչերու համար՝

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱՅ ԴԵՌԱՏԻ ՄԱՆՉ ՄԸ

Նուէրի համար բազմադոյն գեղեցիկ կողքով մը զարդարուած

Եւրամանջիւր հասուրը 7 դր.

Կեդրոնաւեցիք Է ԱՍԿԱԵԱՆ ՏՊԱՐԱՆ Եւ ՊԱՆԵՆՅ ԴՐԱՏՈՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Աւիսաստիւրեց՝ ՏՕԳԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Այս հատորը՝ զիրաւանակալի լեզուով և եղանակով ծանօթութիւն կու տայ մարդկային մարմինին կազմախօսութեանը և առողջապահութեանը վրայ : Զերմապէս յանձնարարելի է ամէն ընտանիքի և ամէն անհատի , քանի որ մարմնական առողջութիւնը առաջին պայմանն է կեանքի երջանկութեան : Կազմողի տարիքով մանաւանդ յարմարագոյն նուէրը՝ իր մաքուր ապագրութեամբը , բաղմամբիւ պատկերներովը եւ ընտիր կազմովը : Վաւերացուած է Ուսումնա. Խորհուրդէն՝ իբր դասագիրք բարձրագոյն և լրացուցիչ դասընթացքներու ուսանողներու Գիւնը 10 դրուշ : Կեդրոնաւեցիք՝ Յ. Մատթէոսեան թղթաւաճառատուն , Ամերիգան Խան , Կ. Պոլիս :

Կազմողի նուէրի համար կը յանձնարարուի 2. Փափաղեանի՝ 1. Զորեյեցուհեան Բառարանը . 2. Ժառանց Կառ Ընտանեկան Խաղեր :

ՀԵՐԴՈՒՄ . — Մանգուռեի 1988 թիւին [6/19 դեկտ. 1907] մէջ կարդացի թէ՛ «Կետարիոյ Էֆքէրէ գիւղին մէջ , Զարչը ճատտէսի՝ հանգուցեալ Պօլի Օղլու հաճի Մուսէսի սեպական տունին և տակի խանութին կէս բաժինը ծախու է» : Պարագ կը նկատենք հրապարակաւ յայտարարել թէ՛ յիշեալ տունին և խանութին կէսը չկրնար ծախուիլ ուրիշի մը , որովհետեւ արդէն կէսը իմն է , և յիշեալ կէսն ալ հանգուցեալին Պոլիս բնակող աղջիկները ինծի ծախած և դրամին մէկ մասն ալ առած են : Պոլիս եղբորս Սարգիս Տօնիկեանի ձեռքէն : Հետեւաբար զայն չեն կրնար ծախել ուրիշի մը , քանի որ ինձմէ ստակ առնուած է և շեֆի եմ :

Կեսարիա

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԲԱՆ. ՏՕՆԻԿԵԱՆ

Ճ. ՍԻՄՕՆ

Բարիկ



ՔՐԷՄ

ՍԻՄՕՆ

Կիսեղինակ պատրաստած
 եւ տառնց որ եւ է հարկական խզի
 Լատագոյն արատաւրութիւնն է
 ան՝ պահպանելու համար ԳԷՄ-
 ՔԻՆ ՈՒ ՉԵՌՔԵՐՈՒՆ
 Ճերմակութիւնը

1900ին բարեկենդանի ուսի ճանգրամ

Քրեմ Սիմոնը մարիւր կը պահպանէ օդին ազդեցութեան դէմ .
 ճաթառութեան, կարմրութեան և խորշակահարութեան
 առաջը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի բրնձափոշիի թեթեւ խաւ մը քսուի ,
 դէմքի գոյնին երիտասարդութեան շլացուցիչ փայլ մը կու տայ :
 Պէտք է ամէն օր գործածել զայն, թաց լաթով մը մորթին վրայ
 տարածելով և յետոյ մեղմ շփումով մը ներս թափանցել տալով :
 Ճարպային ոչ մէկ մարմին չպարունակելով , ամբողջովին կը
 լուծուի ջուրին մէջ :

ՄԻԱՎՆ Է ԱՆ ՈՐ ԸՆԳՈՒՆՈՒՄԻ ԸՆԴԱՅ ԲՈՒՈՐ ԳԵՂԱՆԷՆԻ-ԳԵՐՍՍԱՆՈՒ
 ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարւած , իսկապէս առողջապահիկ ու ամենաառաջ-
 նակարգ Քրեմն է ան աղւորութեան : Բովանդակ աշխարհի մէջ
 իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
 որոնցմէ պէտք է խորշիկ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոնը , բրնձափոշի Սիմոնը և Սիմոնի
 օճառը կը գտնուին գեղարաններուն , անուշահոտու-
 թեան վաճառատուններու և պաղարներու մէջ :

Գեմտ ասեմ պէտք է լաւ ճնշել վահառանքը՝ որ պէտք է ըլլայ
 ը ոյս պատկերին նիւտ նմանը :



ԱՄԵՐԻԿԱ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔՂԱՌՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՆՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԾԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 5

22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԻՆԿԱԾՆԵՐ

“ ՇԱՏ ” ԻՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Քառեկամիս

ՎԱՀԱՆ ԵԱՐՃԱՆԵԱՆ-ԻՆ

Որ սիրող մըն է իմ ԽՆԿԱԾՆԵՐՈՒ Շարքին

Մասիսում և այլուր

Մուժիկն հետ, թանձրացող քաղաքին ու շէնքերուն վրայ, փողոց կ'իյնար, ցցուելով անձանթ անկիւնէ մը, ծերունի մուրիկը, քայքայուած, խլիւլած, դողահար, դառաւ: Ահեղ աղաղակ մը կը բարձրացնէր ան, որոտալից վայնասուն մը, անաբեկիչ գոռում-գոչում մը, որ լեզուդատաւ կը բերէր զինքը լսողները: Ի՞նչ ունէր իր ձայնին մէջ վրդովիչ ու սարսուղ, որ ականջները կը սթափէին իր աղաղակէն ու կը համակուէին կարեկցութիւնով, ամէնքը գգածուած գթութեան զգացումի իրենց բոլոր յուզումին մէջ: Աղերսի այլակերպ գոչ մը, աղօթքի ու շնորհաւղալութեան զգրգիլ չեղաւ մը ունէր ան, ուղղուած ասուղի'ն ալ, չնուշ-չեկ'ն ալ, ինչպէս օրհնաբաշխ շատլ բերանները ծեր մութացկաններու: Եղգգուած ու պատառատուն զգեստները՝ չէին բաւեր ծածկելու իր կարմիրնը, որմէ մերկ պատառներ՝ դուրսը կը մնային չարունակ, մա-

զուտ ու սեւ էջեր ցուցադրելով : Կորաքամակ , ազօտ ու թաց ակնարկներով , զողզղալով , կրթնած հաստ իր ճոկանին , տատանելով կթոտ քայլերու վրայ , կ'առաջանար , կը քսքսուէր փողոցներէն , քովն իվար կախած պարտրոտ տոպրակը , օրօրուող ետ-առաջ , համաչափօրէն իր քալուածքին : Թաւամաղ ու ալերեկ իր մօրուքը՝ կը հալածուէր հո-վէն ու անձրեւէն , փռուելով մէկ կողմէն միւսը , խառնուելով թանձր պիտերուն հետ , բերանին վրայ կլկլելով : Գիշերաշրջիկ զիւահար ոգի մը , հալածական ու ախահար , որ մութին մէջ կը զեզերէր , մէկ վայր-կեանէն միւսը անդ փոխած , աստանդական , մոլորուն : Ու իր ձայնը կը թնդար հասակն իվեր շէնքերուն , կը դզրդէր փողոցները , կսղ-կողագին արձագանգելով տուններէն ներս , ուր կ'արթնցնէր մարած , թմրած , քնացող ոգին կարեկցութեան զգացումին , մեծափարթամ սիր-տերու մէջ : Իր չըջագայած թաղերուն ծանօթ մօտիկն էր ինք , որ ատենը մէյ մը մէջտեղ կ'իկլէր , պարբերաբար անհետանալով : Մութիկի խորհրդ մը , անթափանց ու դադանաքօղ այդ անյայտացումը , որ անմեկնելի կը մնար : Օր մը նորէն կ'երեւար սակայ , և իր ձայնը , իր դոջը , սահմելիչ վայնասունը կը կանխէր իր տեսքը , որ անտեսա-ելի կը մնար մութին մէջ , մութին հետ այցի ելլող ոգի մը արդէն ինք , չուարուն և ուղեկորոյն ջղջիկ , մութը ճեղքելով բոյնը փնտռող : Կ'ողորմէին իրեն , լիառատ ու սրտազին : Տղաք իր բարեկամն էին , այդ խորհրդաւոր , զարմանալի ծերունիին , որ ազալաւոր , մտերմա-կան , փաղաքշիչ շէշտ մը ունէր իրենց , սրտաշարժ ու միանգամայն զուարճալի : Անոնցմէ շատերը իր հետը կ'իյնային , եզերքներուն կառ-չած իր թափթփօղ , բլիկ-բլիկ գրգռականերուն , հեգնանքի , զուար-ձութեան բաւեր թռչնելով իր շուրջը , օրոնցմէ էէր նեղուեր : Բնդ-հակառակը , կ'երեւար տեսակ մը հաճոյք զգալ անոնցմէ , ինչպէս ամէն ծերունի՝ որ վայելք կ'ընէ չուրջը ոտոտաող տղոց խայտանքէն : Մա-նաւանդ , — մօրացկանութեան արուեստի դադանիք , — այդ զուար-ճարանութիւնները լիառատ վարձք մը կը թափէին իր դոզը , իրմէ հմայում տղոց չուայ ու անխնայ ոգորմութիւններով փոխարինուելով :

*

Ան գիշերը , ձայնին , աղաղակին , ազալաւոր գոչերուն չէշտ աստիճան մըն ալ բարձրացուցեր էր , բոլոր ուժը տալով պառայու , անա՛կ պաղատական ճիշով մը , անա՛նկ աղետագութ վայնասու-նով մը , որ կը դզրդէր փողոցը , և որ կը ներշնչէր զգացումը թէ՛ հիմա պիտի անօթի մեռնի , եթէ ողորմող մը չըլլայ : Ագ էր պատճառը որ՝ բոլոր դուռները բայտեցան իրեն համար , իր գոգը լեցնելու ինչ որ սկզբանէ ասելի էր : Հայրական ու հոգեւունչ օրհնէնքներով՝ ընդու-նեց բոլորը , և տեղաւորեց ամենի իր տոպրակին մէջ , որ , անյատակ խորխորատ , կուլ կու տար օրկորէն բոլոր ներս նետուածը : Ու գոհ էր ներքնովին , ըրած ցոյցին յաջող կէքին համար : Չէ՞ որ , այդչափ ուժ-զին գիմուժ չընելով սիրտերու , զանոնք փակ պիտի դանէր ու ան-ասարկեր՝ սովորական եղանակներու : Համրութիւնը մեծազդորդ աղա-

զակի պէտք ունէր, ցնցուելու և արթննալու համար իր քնացող զգացումներուն մէջ, և ինք յաջողութեամբ էր մտածուած փորձը : Տունէ մը, զուսին առջեւ, խոշոր սանի մը մէջ, տաք ու լիառատ կերակուր մը հրամցուեցաւ իրեն, ճարպոտ թանձրահոծ խառնուրդ մը անանուխ համադամի մը, որուն յորդ շոգին կ'ելլէր վրայէն : Ինչ հաճելի կու գար իրեն ճաշակել զայն ձրի, լիակուշտ, և ինչպէս իր քիմքը կը գգուէր անկէ բարձրացող հոտը : Իր գոտարկ ստամոքսին՝ ճրջափ հաճելի կու գար լախել զայն լիայագուրդ : Անցաւ զլուխը, գոհունակ ժողովով, խանդավառ ակնարկներով ու գուրգուրալից փարուծով : Դագլը կը շառաչէր, աննդայոյց ու հապշտապ երթեւեկով : Ինչպէս կը տաքնար անոթութեան տաքնաւորով առջարուող իր ցուրտ ստամոքսը, և ինչպէս կը հեշտանար, կը խաղտար, կը թրթուէր մարմինը՝ ձրի ձեռք ձգուած առանձն ճաշէն : Կէս ըրած էր, երբ կշտացած ըլլալը զգաց, և մարմինին վրայ ցցուեցաւ, ստամոքսը կշռուաւ, կերածը տեղաւորցնելու պէտքով : Զգաց որ կշտացիր էր ու ա'լ ակզէր մնացած ուսելու : Բայց աւելցնէր մնացածը, թափէր, և՛ տաք : Կարելի՞ էր ագ : Կէ՞ որ ձրի էր և ինք արածուած էր ամէնը ուսելու : Ուժ տուաւ կուրծքին, և բռնողատեց ինքզինքը՝ ճաշը մինչև տակը լնցնելու ճիգով : Կերաւ, կերաւ, զժուարով, ինքզինքը սխմելով, նեղը գնելով մարմինը, բռնուած բոլորը հապնելու կոյր մոլեգնութենէ մը : Զգաց որ, վերջին պատահները ա'լ ստատիկ զգիւմակութիւնով վար կ'երթային, բողբոջելով կոկորդին ու ստամոքսին ահարկու ճիգերուն : Կնցուց սակայն : Զուրի պապակով կ'այրէր կոկորդը : Զուր ուզեց՝ իր առջեւը կիսաբայց մնացող դուռէն, այնու տակը նստեցուցեր էին զինքը, ու խմեց առատ : Ելաւ, ցցուեցաւ, մեծ անհանգստութիւնով, ստամոքսը ծանրաբեռնող անսովոր յագեցումէն : Քայելու կարող չէր զգար ինքզինքը : Կ'առաջանար սակայն, ա'լ ձայնը կարած : Անկիւն մը դառնալուն, ոտքերը ծանրացան և մարմինի տանջանալից ճմուռ մը զգաց : Գլուխը ահաւոր կերպով պտուռքիլ սկսաւ ու աչքերը միմնացան : Զգաց որ բան մը կը փլէր իր մէջ, կը քայքայուէր ու կ'անջատուէր մարմինէն : Տագնապալից գալարում մը ունեցաւ, մարմինը մեղկացաւ ու իրմէ խոյս տուին բոլոր ուժերը : Աչքերը ակնակապիճներէն դուրս կը նստուէին, և իրեն կը թուէր թէ՛ մարմինին մէջ հոտացող զանգուած մը՝ կ'ուզէր դուրս խոյանալ, զսպւած շոգիի կոյտի մը պէս, պատուտելով, բզքտելով, ճանկաթելով կուրծքը, թոքերը, կոկորդը, ալիքները : Սրունքներուն վրայ փաւ : Մարմինը դիտապատ փռուեցաւ գետին, խուլ թնդիւն մը արձակելով հողին վրայ : Դիւային հոնդիւն մը ժայթքեց կուրծքէն ու անշնչացաւ, կռնակի վրայ, զլուխը գետին, մօրուքը երկինք ցցաւ, թեւառարած, մուկին մէջ կազմելով խորհրդաւոր պատկեր մը խաչի, զոհուած «Շատ»ին Յանկութեան մոլեգին Բնադրին, որ Քիչէն անյագ Մարգը կը զգեանէր եղեռնական մահացումի մը մէջ :

ԵՆՈՎԻ ԱՐՍԷՆ

ԼԻՒՍԻՒՆ ԻՏԵԱԼԸ

Բ.

Լիւսիին ձանձրոյթը երգար չտեւեց : Աճուրդէ մը աժան գնուած Բլէյէի մը և Մանչէսթրէ արձակուրդով վերադարձող իր ֆուգեկին՝ Ճէյմսի յաճախակի ներկայութիւնը իր մօտ՝ սքանչելի ժամանցներ ստեղծեցին հրաշագեղ աղջկան համար : Իր երազախառն բաղձանքներուն ու ապաւորութիւններուն աշխարհը լեցուն էր հիմա՝ իր տարիքը ունեցող զգայատանջ աղջկան յատուկ հրապոյրներով ու վայելքներով : Դաշնակ , վէպ , առանձին պոռոյտներ իրգընին հետ , իր տաղաուկը փարատելու , իր կուսական կեանքը իրեն սիրցնելու մեծապէս նպաստեցին :

— Ծէյմս , ո՛ւր պիտի երթանք այսօր , կը հարցնէր իր հօբելդրօրդ զինն , ամէն անգամ որ ան կ'երթար զինքը դուրս հանելու :

Ու երկուստարդը , գեղեցիկապէս հաճոյակատար մը , կը փութար սիրուած զբօսավայրի մը անունը տալ :

Ծէյմս քանդուած տարու անկողնէն մըն էր , — Մանչէսթր հաստատուած՝ հօյր հետ , աւանդական Վանիֆաքուրաի վաճառական մը հրապարակին վրայ , — որ այդ ամառը՝ գործերու կայունութենէն օգտուելով Պոլիս եկած էր երկու ամսուան արձակուրդով , զբօսական պոռոյտի և միեւնոյն ատեն ազգականները տեսնելու համար : Իր երեւումը Դուկաս աղաին տունին մէջ համակրանքով ողջունուեցաւ , մանաւանդ Լիւսիին կողմէ՝ որ իր ճաշակին յարմար քանցար մը գտած էր արդէն անոր մէջ , իրեն արժանի ֆալշայիէ մը միեւնոյն ատեն , անոր ազգականութենէն օգտուելով աշխարհիկ զբօսանքներու մէջ նետուելու , և յագուրդ տալու համար իր մատաղատի հաճոյատէր կոյսի ակործակներուն և տենչանքներուն : Անգլիական կաղապարի վրայ ձեւուած քիչ մը այդ նորեկը , իր քերծուած գէմքովը և կապոյտ խոշոր աչքերովը , և որ սակայն չուտով կը մասնէր իր անբուական կեղեկին մէջը կիսովին պարտկուած Հայ մը , թերթաշ հայերէնով լսնալի մը արտասանութեան ատենը , հակառակ իր սահուն կերպով խօսած անգլերէնին և ազատ շարժուածներուն , ինչպէս հաստաներուան կոշիկներուն ու գլխարկին : Լիւսիին զմայլելի շնորհներով գեղեցկութիւնը մեծ ու մնայուն ապաւորութիւն մը թողուց Վանիֆաքուրի վրայ , առաջին վայրկեանէն : Որքան փոփոխութիւն՝ անոր վրայ , չորս տարիներէ ի վեր՝ երբ Պոլիսէն բացակայ էր եղած : Անոր մաերմութեանը մէջ ապրիլը , որչափ ատեն որ Պոլիս պիտի մնար , իրեն համար անպայման ուրախութեան ու բաղդաւորութեան գոհունակ տոբի մը նկատուեց և ջանաց կարելի եղածին չափ օգտուիլ անկէ , կոյս ու նկարչագեղ անկիւններ առաջնորդելով

զայն, հիանալու համար թէ՛ քնութեան մեծալայելուչ տեսարաններուն և թէ՛ իր ֆուզիկին անմահ հրապոյրներուն վրայ հաւասարադէս : Արդէն արեւելեան երկինքին տակ փթթող ծաղիկի ու ձիւնի սպիտակութիւններով սարսուղին կուսութիւններու վայելումին բազմանքը կանուխէն զրաւած էր իր ցանկաւառ հոգին, հիւսիսային երկիրներու անտանելի մռայլով ու մառախուղներով համակուած հորիզոնին տակ ձանձրոյթ է և սրտնեղութիւնէ տառապած պահերուն, և հիմա որ բայցաւիկ պարագան ներկայացած էր, որոշած էր կարելի եղածին չափ նպաստաւորուիլ անկէ, ընկերային պայմաններուն և յարաբերութիւններուն թոյլատրած սահմանին մէջ : Իր ու Լիւսիին միտքին մէջ՝ անանց ու տպաւորուն դրոշմ մը ձգեց մանաւանդ ուրբաթ օրուան մը պտոյտին յիշատակը . . . Իրենց շարունակական պտոյտներուն ատեն, երկուքն ալ կարօթը զգացեր էին երկաւր արշաւանքի մը, որ նուիրագործէր իրենց երիտասարդ հոգիներուն թրթռուն զմայլանքներուն արքշութիւնը, և որոշեր էին՝ մէկտեղ Պէօլիւքաէրէ երթալ այդ օրը, կանուխէն, ցորեկուան իրենց ճաշը ընելու ծովեզերեայ գեղածիծաղ տեսքով պանդոկներէն մէկուն պարտէզին մէջ : Հակառակ իրենց արեւակիցի կապերուն բերումով՝ չբամբասուելու իրաւունքին, Տիկին Փառանձեմ ամուսինին պզտիկ զիտուցութիւն մը ըրաւ, ուրիշներուն «Խնչ պիտի ըսեն»ը մտաբերելով անշուշտ, որուն Ղուկաս աղան ուժ տուաւ մուտաւոր . «Հիմակուան ֆուգենները կ'ուզեն . . . » : Իր բովանդակ կեանքին մէջը արտասանած միակ սրամիտ խօսքն էր ադ ապահովաբար, որուն վրայ խնդային այր ու կին, էրիկը . . . աչք մը քթթելով կնոջը՝ որ ամօթխածութիւնէն վար առաւ իրենները, անշուշտ հին յուշերը մը անցընելով միտքէն, և երկուքն ալ լռեցին, առանց արգելք դնելու սակայն ծրագրուած պտոյտին, մտածելով որ ճէյմս արդէն մէկ-երկու շաբաթէն Մանչէսթըր պիտի վերադառնար և թէ անխորհուրդ բան էր որ և է ընդդիմութիւնով մը արծարծել երիտասարդներուն համակրութիւնը . . . : Պէօլիւք-Տէրի ֆագիմօն մէյմէկ գաւաթ գարեջուր առնելէ ետքը, ճէյմս ու Լիւսի ուղղուեցան Օթէլ տը Բառի : Ո՞վ չէ լսած անունը այդ ծանօթ ու դիւրամտաչելի պա՛գոկին, որ ա՛յնչափ փութկոտ ընդունելութիւն մը կը վերապահէ իրեն դիմողներուն : Պարտէզը, ծովեզերքին մօտ, մաքուր, ձիւնասպիտակ սփռոցով մը կազմ և պատրաստ սեղանի մը առջև նստան երկուքը, չի՛ մը «Աքաթէն» բերիլ տալով, աչքերնին առածին չափ հիանալով միեւնոյն տանն ընտելեան պարզած հիանալի հոմաշնապատկերին վրայ : Ահաւասիկ Բաշտ-Պաղէն, Պէյքողը, հեռո՞ւն, դիմացօք, կապուտակ մշուշներու դողը թաղուած, ծանօթ գիւղերու շաքքով մը իրենց կարգին, ամէնքն ալ իրենց շինական ուրոյն հրապոյրներովը աշխարհիկ վայելքներու յատկացուած : Բայց Պէօլիւք-Տէրէն, բայց իր մօտի քոյր Թարապիւսն,

ուրիշ աղնուապետական հով մը ա՛յնչափ օւժգին կը փչէ . . . միջա-
կորեար կամ համեստ դասակարգը մինչև Սարը-Եար կամ Եէնի-Մահալլէ
քչելու տասիճան . . . : Իրենց առջև , ծովը , անմահ կապոյտով
երանդաւորումը , արեւին ոսկին կը լուայ , իր անառնման հեղուկ քղանց-
քին սպիտակ ֆրոն-ֆրոն արծաղանդելով փփունքին կորզած չառաչուն
համըոյրներուն հետ , որոնք , ակնթարթը անգամ մը , կը հնչեն ու կը
ցնդին , աղու ծիծաղկոտ ուրախութիւններու նման . . . : Ծօխ ճաշէ
մը ետքը , իրիկուան դէմ , ձեռք ձեռքի ու երբեմն թեւ թեւի , ինչպէս
զօյք մը անհոգ սիրահարներ , թեթեւաքայլ անցան անոնք մշտափառ
արեւի մը յորդ ճաճանչներէն ողողուած լայն հրապարակէն մինչև Մէ-
զար-Պրունի պողոտան , իրենց երիտասարդ սիրտին դգացումներուն ու
մտածումներուն հոյլին դիմելով փոխադարձաբար , և կառք մը նստան
ուղղուելու համար Թարապիա , Սըմմըր Բէլէյա : Պատշա մը հոգ ալ
չքնաղ ու խորհրդապահ ծառուղիներուն մէջէն , կայք մը՝ երկսեռ
զօարթ Անգլիացիներու lawn tennisի match մը դիտելու , և երջանիկ
վերադարձ մը տուն , օրերնին օ՛ր ըրած , աղբած ըլլալու գոհունակ
սպասորութիւնով մը հոգինին զեղուն : Այս յիշատակելի անցքը ամէն
տան կը մտաբերէր Լիւսի , ուրիշ չառերու հետ , այն օրէն ի վեր՝ ուր
Ճէյմս մեկնած էր ալ , խանդաղատալից բաժանումէ մը ետքը , խոս-
տանալով դրիկ իրեն , խոստում զոր պահած էր , և դեռուտի աղջիկը
իր վէպերուն ու դաշնակին ապաւինած , իր կեանքին մե՛ծ երազը կ'երկ-
նէր հիմա : Ինքը , La Belle au Bois Dormante , ինքը՝ Ժիւլիէթ մը ,
պիտի գտնէ՞ր իր սէրին արժանի ասպետը , իր Ռօմէօն : Կարդացած
վէպերը չառ բաներ խօսած էին իր երանգածօխ երեւակայութեան ,
չառ բաներ թրթուացուցած՝ «անմահելի»ին , «անհպելի»ին՝ ձգտող իր
արտասովոր , այլամերժ հակումներուն մէջ , կ'երազէր միլիոնատէր
ամուսին մը , երիտասարդ ու աղնուապետ , վէպի կտաարեալ հերոս մը ,
որ երթար ծնրադրել իր առջև , խնդրելու համար իր ձեռքը , և սրտա-
գին խոստանալով զինքը երջանկացնել՝ իր բովանդակ կեանքին մէջ :
Այդ թեկնածուն չուշադու ներկայանալ :

«Սինկափուր»էն չէր այս փեսացուն , այլ Ա. Ֆերիկայէն , Տօլարներու
երկիրէն , ուր հաստատուած էր քսանըֆինդ տարիէ ի վեր , և ուրիշ
վերջերս Պոլիս գալով Բերա Բէլէյա իջևանած էր : Իր ժամանումը ծա-
նուցեր էին օրուան թերթերը , ինչո՞տ պատու մը փառաբանելու իրենց
յատուկ լայնորոտ չափազանցութիւնով սիւնակներ լեցնելով և ներ-
կայացնելով զայն մեծահարուստ ու տակաւին երիտասարդ *մեկքլմեկ*
մը : Փսփսուքները , չչնկոցները , զրոյցները սկսան ծալր տալ անմի-
ջապէս այս նորեկին հաշիւին : Տէր ևւ արկին Սիմօնեան ալ իրար ան-
ցան , իմանալով անոր ամուսնանալու մտադրութիւնը : Լիւսի քուն չու-
նէր : Եւ վերջապէս միջոցը գտնելով՝ զայն իրենց տունը հրաւիրել
տունին կիրակի միջօրեաք մը :

Օր. Սայմենսի հրաշալի գեղեցկութիւնը յաղթանակը տարաւ : Թեկ-
նածուռն, «Չարլս Հընդըր» անունով ներկայացուցեր էր ինքզինքը [Բաւլօ
Սւլճեան] : Բամպակի մեծ վաճառական մը (•) որ սեղանաւորական գոր-
ծերով ալ կը զբաղէր, եւ որուն Պօլիս գալուն նպատակն է եղեր հա-
մետ Հայ աղջկան մը հետ ամուսնանալով Նիւ-Եօքք վերադառնալ
կարելի եղածին չափ շուտ : Տարիքը քառասունի մօտ, սիլիկէսք գլխար-
կով, խիստ վայելչազգեստ, պէսերը ծայրատուած, դորչաչուր, մա-
զերը քունքերուն մօտ ճերմկելու սկսած մէկն էր նորեկը, դաւառիկ,
հնչու մով արտասանութիւնով, որ անդատճառ խարբերդցի մը կամ Եօզ-
կատցի մը կը մասնէր : Եւ ուկայն, հակառակ տարիքին անպատե-
հութեան, իր շարժուիւնքը, շահեկան նիւթերու վրայ խօսակցութիւնը
եւ մտնաւանդ ձգողութիւնը իր առատելական հարստութեան [?] ան-
դիմադրելի cachet մը կու տային իր անձին : Լիւսի դրաւուած էր ամէն
բանէ տաջ անոր փարթածութիւնէն, եւ նոյն պահուն կ'երեւակայէր
արդէն Նիւ-Եօքքի Ֆիֆթ Էլիւնիւին վրայ երկնաբերձ պանդոկ մը,
անձնական կառքերով, օդօւօպիլով եւ փրաֆաւոր սպասաւորներով
լրացած :

Օհ, անողոք պատրանքը :

Նիւ-Եօքք հասնելուն եւ իր ամուսինին Մը. Հընդըրի հետ իրենց յա-
տուկ ընտանեկան յարկին մէջ հաստատուելուն օրէն է որ Լիւսի իր
երազններուն բիւրեղանդ աշխարհէն ի քզինքը փոխադրուած գտաւ յան-
կարձ մերկ ու ճշմարիտ իրականութեան ծոցին մէջ : Երկու յարկով
տուն մըն էր աղ բնակարանը, աւելի ճիշդը՝ անակի պէս բան մը, ան-
շուք ու հնամենի, որ հսկայ քաղաքին շրջանակէն դուրս մնացած ի
սպասարութիւնը թողելուն հետ, անհրապոյր երեոյթ մը կը պարզէր : Մէջը
իրենց մէ ե Չարլսի հօրմէն ինչպէս նաեւ խառնածին ծառայէ մը զատ մարդ-
չկոր : Իսկ բամպակի վաճառական եւ սեղանաւոր Սաթըր Հընդըրը, զոր
Պօլիսի թերթերը մինչեւ երկինք բարձրացուցեր էին, նոր Ռօքֆէլլըր
մը դաժմ յղէս, իրականին մէջ ուրիշ բան չէր, բայց եթէ . . . սա-
կարանի աննշան միջնորդ մը, որ պզտիկ ազարակի մըն ալ տէր էր եւ
որուն ամբողջ նիւթական կարողութիւնը քանի մը հազար աօլարէն ան-
դին չէր անցներ . . .

Այս անակնկալը շանթահարեց Լիւսին : Աւագեց այն օրը ուր իր
խանդավառ ու երազամով աղջկան բաղձանքներուն ստատկութեանը,
ինչպէս նաեւ իր փառասիրական ձգտումներուն անդիմադրելի դարձ-
նումին մէջ առիթ ու ժամանակ չէր ունեցած հասու ըլլալու բո՛ւն
ճշմարտութեան, եւ իրեններն ալ, իրենց bourgeois մարդու երջանիկ
կուրսութեան մէջ, աջէն ձախէն տեղացող սխալ գրոյցներու վրայ միտն
յինա՞ծ՝ խոչոր parti մը ձեռք ձգած խելայեղ ցնծութիւնով մը, աճապարած
էին իրերը դաճով թել, առանց դիմելու տեղեկութիւններու պատուաւոր
գրասենեակի մը կամ ծանօթ վաճառականներու, նշեկու համար նիւ-
թական միջոցները ու վարկը մարդու մը՝ որ իրենց աղջկանը տիրացած
էր յանկարծական ու արագ դրաւումով մը : Արդէն, չէ՞ որ Մը. Հընդըր,
աղջիկատէին օրը, յայտարարեր էր իրենց թէ կարելի եղածին չափ շուտ
կ'ուղէր Նիւ-Եօքք վերադառնալ, ուր զինքը կը կոչէին առեւոր. կարեւոր
եւ անհրաժեշտ գործեր, բայց թէ իրենք, այդ փութկոտութեան տակ ծա՞՞-

կուած բո՛ւն իմաստը , թաքուն նկատու մը չէին կրցած բխանել . . .
 Միլիոնաւորին տեղ՝ բաղդախնդիր մը, ֆիֆթ Էմբլիւի շքեղ բնա-
 կարանին և զա՛յն շրջապատող դրախտանման պարտէզի մը մեծաւայելչու-
 թեան տեղ . . . խրճիթ մը և ազարակին ու . . . ակտուն արջառներուն
 գարշ հոտը . . . : «Ա՜ս է եղեր» կեանքը , ա՜ս պիտի ըլլայ եղէր իր
 թաղային նոսրագործու մը . . . :

Ու Լիւնի , իր դասն յուսակարութիւններուն մէջ , երկարօրէն լա-
 ցաւ կորուստը իր կուսութեան ծաղիկին, զոր Մր. Հընդրի պէս կնկան
 ճարպիկ որսորդի մը նոսրեր էր , աներեւակայելի միամտութիւ-
 նով մը . . .

ՄԻՅՐԱՆ ՌԻՂՈՒՐԵԱՆ

Հեռեւեալ գոգոսիկ փերուածը , բարախուն հալածական կարողին զգացումի
 մը շեօտով , ծերունագաղ ժողովրդական բանասեղծ Միքիչ Անէմ-
 եանի սրահօսին է՝ ուղղուած իր աղջկանը Օր. Վիքթորիա Անէմեանի՝
 սնոր ամուսնութեանը առիթով , և արատաւում՝ Սրբանիսի արա-
 հին մէջ՝ բանասեղծին եպորաղջիկը՝ Օր. Արփինէ՝ Տ. Անէմեանի
 կողմէ՝ հարստանկան հանդէսին միջոցին : Բանասեղծ-Հօր եղբիին եւ-
 մար ա՛յնչափ յուզիչ ու յիշատակելի այս տաղին արտասանողը՝ Օր.
 Արփինէ՝ այն ծաղկաւի աղջիկն է՝ զոր Անէմեան եղած է տեսնով ,
 «Արփինէ» խորագրուած ծանօթ փերուածի մը մէջ :

ՆՈՐ ՀԱՐՍԻՆ

Ծաղիկներ՝ կան նուրբ ու փափուկ
 Բայրով անուշ ու խառափուկ ,
 Այն կիներուն պէս գեղեցիկ
 Որոնց տէրն է մեղի՝ վաղանցիկ :

Ծաղիկներ՝ կան՝ աչքի հրապոյր
 Վառվառ գոյնով , բայց չունին բոյր .
 Անոնք կիներն են պչրատէր՝
 Որոնց սիրար չէ բարախեր :

Ծաղիկներ կան անսեռեւեռ
 Որոնք ռուսիչ ձիրք մ'ունին զեռ .
 Անոնք կիներն են հոգատար՝
 Ընտանեկան սիրոյ տիպար :

Դո՛ւն , Վիքթորիա՛ , դուն այն համեստ
 Ազնիւ ծաղիկն ես անարուեստ .
 Դուրզուրանքով՝ սիրտ եռանդուն՝
 Մեր բոյնին շուրջ կը հսկես դուն :

Յորձանքին զէմ կեանքին անձուկ՝
 Սիրտիդ ընտրածը բեզ նեցուկ ~
 Ու Մէրն ըրած քեզ ուղեկից՝
 Դիմագրաւէ՝ միշտ յուսալից :

Հարսի պսակ ճակատիդ դրբին
 Զօր համբուրեմ հեծեճագին .
 Երկինք նայէ՛ , մայրիկդ հո՛ն է ,
 Ո՛հ, Ան ուրախ զբեզ կ'օրհնէ :

ՄԿՐՏԻԶ ԱՃԷՄԵԱՆ

Ա Վ Փ Ի Ա Ր Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Որբեւայրի . . . ինչ աղւոր , ինչ թեւադրիչ , որչափ սաղարանքով
լեցուն բառ :

Որբեւայրիները՝ կարգուած կիներու հետ , լուադոյն ապացոյցներն
են Աստուածային բարութեան և միակ երկու զեղահրաշ բաները՝ որոնք
դուրս եկած ըլլան Արարչագործութեան ձեռքէն :

Որբեւայրին կէս մարած հրաբուխն է՝ նորէն բռնկելու տրամադիր :

Որբեւայրին այն հրջանիկ արարածն է՝ որ վայելած է բոլոր աղւոր
բաները ամուսնութեան և կորսնցուցած՝ ինչ որ կայ անոր մէջ անհան-
դուրմելի . . . ամուսինը :

Որբեւայրին բարի է . զիտէ ամէն բանին արժէքը , ապերախտ չը-
լար , կը գնահատէ ինչ որ կ'ընծայես իրեն և ես կը գտնանէ ինչ որ
փոխ կու տաս :

*

Ազջիկներ կան որ կորսուելնուն պէս ինքզինքնին կը գտնեն :

*

Կին մը ո՛չ կ'ըսէ , երբ այն՝ պիտի ըսէր , եթէ առաջարկութիւնը կէս
ժամ առաջ դար իրեն : Ան որ այսօր կը մերժէ , պատճառ մը չի կայ
կարծելու թէ վաղը չպիտի հաւանի : Հինգշաբթի օրը մերժող կիներ՝
կրնայ ընդունիլ չաբաթ : Տիկինը «ոչ» բռաւ , որովհետեւ առաջարկու-
թիւնը ըրած պահուդ՝ փոխանակ ոտքի վրայ դնուելու , նստած էիր :

Կնոջ մը բարոյականին վրայ մեծ ազդեցութիւն ունին—դիտուած է
աս—ջիւղերը , օդը , տեղը , ժամը , միջոցը , վայրկեանը , պարագաները ,
նստած ֆանաթէն ressortները , վարագոյրներուն դոյնը , ձեղունին բարձր
կամ ցած ըլլալը , օդին չոր կամ խոնավ ըլլալը , լուսնին շրջանները ,
տաքը , պաղը , կերած կերակուրներուն տեսակը , կարգացած գիրքին
որակը , լսած երգին եղանակը , հագած շրջագլխաւորին ձեւը , ձեր պե-
խրուն գոյնը , գրպաննիւղ ունեցած ստակնուղ քանակը , առտուն ո՛ր
կողմին վրայ արթնցած ըլլալը և ուրիշ հազարումէկ բաներ , որոնց
ամէնքն ալ աս վայրկեանիս միտքս չեն գար , բան մը որուն չափ կը
ցատիտ :

*

Կեանքը անուշ է և ասորիւր համով անո՛նց համար՝ որոնց խիղճը
խայթ չունի , սիրար տոնդ և միտքը մոլորում :

*

Պայմանադրութիւնները կը ներքին այսօր բան մը՝ զոր կ'արգիլէին
երէկ : Ամէնէն պատուաւոր կիներ իր հոլանի ուսերը կրնայ ցոյց տալ
հինգ հարիւր էրիկ մարդերու , երբ միասին կը դնուին ասոնք . բայց
երբեք , երբ զատ զատ կը ներկայանան :

*

Մինչև հիմա ամուսնութիւնը նկատուած էր իբր վերջին յիմարութիւն մը՝ զոր սմուրի մը կրնար գործել : Ամուսնալուծութիւնը հնարուեցաւ բարեբաղդաբար , այդ տնայտեհութիւնը զարմանելու համար , ինչպէս serumը՝ կեղծմաշկէ աղատելու համար մանուկները :

*

Ասելի կը նախընտրեմ սիրական մը ունենալ որ ապակիին ետեւէն կը ժպտի , քան սիրական մը որ ծունգերուս վրայ կը խնդայ : Ժպիտը ազնուական է , խնդալը գոհնիկ : Ժպիտը շունչ մըն է որ հոգիէն կը բղխի , սիրտին մէջէն կ'անցնի և կը փթթի չրթունքներու վրայ : Խնդալը փայծաղին ցնցումն է : Ծշմարիտ espritն կը ժպտեցնէ . միմոսներն են որ խնդացնել կու տան :

*

Հարբւրաւոր կիներու վրայ ըրած ուսումնասիրութիւնէք կրնաս յոռետես գաղափարներ կազմած ըլլալ իգական սեռին վրայ : Բայց մէկ հատին կողմէ եկած բառ մը , ակնարկ մը , ժպիտ մը բաւական է՝ լաւատեսներուն լաւատեսը ընելու համար քեզ :

*

. . . Տարաշխարհիկ բոյսի մը պէս նուրբ , շանքանեալ փրփուրին պէս զգլխիչ , գարնան առաւունջ մը պէս ժպտուն , նրբամիտ , երազկոտ , բարձր խաչախերով սողորուն , Amitié Amoureuseի հեղինակութիւնն պէս զգայուն , կաթով , մեղրով , պաշիկով անուշամեղիք ազջիկ մըն էր Տիւրսինէս , որուն պինդ պինդ նայիլ չէիր կրնար , վախնալով որ նայուածքիդ ճնշումին տակ չի մաշի՝ բիրեղէ , մետաքսէ , ելակէ շաղուռած այդ մարմինը :

Վիպային աղջիկ մը՝ զոր չափ սիրելէ կը դգուշանայիր , կեցած տեղը հալիլը չտեսնելու համար :

*

Հանրատուներու մէջ տարիներով բզկտուած կիներու քով երբեմն աւելի բարոյական կայ , սիրտի աւելի մաքրութիւն , քան այն կոյսերուն քով՝ որոնք իրենց նարնջենիի ծաղիկով կը պարծենան , մինչդեռ այդ նարնջենիի ծառին բոլոր մնացած տերեւները հատիկ հատիկ փրցուած են արդէն , առանց ծաղիկին դպցուելու : Եթէ մտածելու այս ազատ եղանակը ընդունուէր , միանգամ ընդ միշտ վերջ պիտի գտնէր այն դժուարին վիճակը՝ որուն ենթարկուած են յաճախ այն խեղճ մեղքնալիք արարածները՝ որոնք մոլորումի վայրկեանի մը մէջ և ընդհանրապէս առանց ուղեւոր՝ վրայ տուած են մարմինի կուտութիւնը , բայց անվթար , մտքուր պահած են՝ ինչ որ ամէնէն չափ փնտռելու է այդ մը իր կնոջ մէն , — սիրտի կուտութիւնը , հոգիի մաքրութիւնը :

ԱՅԿԱԶՈՎՍՔԻԻ ԾՈՎԱՆԿԱՐԻՆ ԱՌՋԵԻ

«Ողբաձայն կոհակէն կոծուող ժայռին վրայ»
Ծովն իր վայգճժը կը պատմէ վերեւներուն փրփուրով .
Լեռնահովիտի շեղքին պէս լայնափեռնէ կրակներ
Կ'օժտեն ծալքը ջուրերուն :
Աշիները փրփրեցաւ
Դո՛ւ շառաչներ կը գոսան
Վեր առնելով ջուրերուն
Այնտեղները երկնաքերձ , վայրէջները քառալի
Որոնց վրային աղկիւններ ու որիներ
Սաւառաքել կը սանին :
Ու սարմաստի
Կ'անհետանան խորք տե՛ծիւր անհունին
Խառնուելով աւազերուն մէջ արաքսաւ ,
Իբր աւազերուն արաքսին
Մէջիւնէ մերմալ ծուկները ըլլային :
Հեռուներէն՝ սրտաստի
Կը նշմարուին կղզիներն ալ քով քովի
Ա՛հ , սիրերու մէջը ունին
Որոնց մէջէն զոյգ մը քարակ մարմաներ
Իրենց հետքը կը քաղեն .
Կը նմանին անոնց զոյգ մը քաղիստաւ՝ մեղմերու .
Որ կղզիներուն հետ խալան
Ծովուն հսկողէ պատշտեն պահպանիչ մը կը կարդան :
Բայց անիկն , ծովը , անփոքր , յորդ արցունքներ կը քափէ ,
Լեցունքները աշիներ են . աշիները արցունքներն են Դոսիողնին
Որոնք երբէք պիտի չը ցամփին
Տարրաւայով , մաս կազմելով ցամաքին :
Յնորայոյց անայտնեան մէջ միւս միւսակ
Հսկայ մաւ մը ողորտի
Կ'առաջանայ , կը հառաչէ , կը կողկողի ,
Եւ զայրոյթին ուժգնութենէն
Կոհակներուն—քերականաց յո՛յժ օժերուն—կը մակաթի
Փրփուրներու յորդ ջրվեժներ ժայթքելով ,
Ինչպէս հարուած մը մուռնի
Կը ժայթքեցնէ յորդ փշուրները կիճի :
Ու աւազերը գեղմանման ծովին մօտէր են այնքան
Վիճակակից մը ըլլալով անոր յազման .
Հիւսիսի կողմէն
Կղզիներուն վրայ քառած՝ ուրիշ զանգուած մը ամպի
Գուրջ գուրջ
Նաւակոծեալ նաւուն դէմ
Վարագաքել կը մնայ .
Նաւորները , —մէջ մէկ հսկայ քեղօղներ , —
Այնտեղներէն կղզիներուն քառեւած
Կը քիալաւեն գերմարդկային ճիգերով ,
Մինչ աղկիւններ ու որիներ
Կը քափահարեն . կը կեղերչեն
Իրենց ձօճող փետուրները վարագաքել
Ջուրին խորքէն ջրղիները կը կանչեն :
Եւ գիւնոյցած այս մարմնակի խոնձապէն
Աւելի՛ վեր , աւելի վեր կը ձեպեն .
Խառնուելով կղզիներուն վրայ յամեցող
Հոլանդութիւն հսկայ ամպին :

ՍԻՐՈՅ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Այն տիրապետող ուժը, որ տարբեր սեռէ երկու անհատներ կ'առինքնէ այլամերժօրէն, աղբիւր բացայայտ կոմեյորդութեամբ կը բացատրուի. ան իր նպատակին հետեւելով՝ ծնելիք տղուն մէջ կ'իրագործուի : Այլտար՝ գալիք զաւակը հօրմէն պիտի ժառանգէ կամքը կամ նկարագիրը . մօրմէն՝ իմացականութիւնը . իսկ երկուքէն ալ՝ ֆիզիքական կազմուածքը, սակայն զիմագիծերը պիտի յիշեցնեն հայրը , եւ հասակը պիտի հաւասարի մօրը հասակին . . . Եթէ երբեք դժուար է իւրաքանչիւր մարդու մասնայատուկ ու այլամերժօրէն անհատական նկարագիրը բացատրել , նուազ դժուար չէ ըմբռնել այն այլամերժ եւ նմանապէս ինքնայատուկ զգացումը՝ որով երկու էակներ զիրար կը յանկուցանեն . ինքնին՝ այդ երկու բաները միեւնոյն բանը կը կազմեն : Տարբանքը ինչ որ է լուկեայն , նոյնն է անհատականութիւնը մեկին կերպով : Կեանքի մէջ առնուած առաջին քայլը , կեանքի ճշմարիտ punctum saliensն է , իրապէս այն վայրկեանը , ուր մեր ծնողքը կը սկսին զիրար սիրել կամ զիրար երեւակայել , անզիրական հիմնալի բացատրութեան մը համաձայն . եւ ինչպէս ըսինք , նոյնն սիրալուսնայաւած քնկրու հանդիպումէն կը ծլի նորաստեղծ էակին առաջին սերմը , շաղկապվումն սերմ մը , անհետա՛նալու հակրամէտ՝ ամէն սերմերու պէս : Այդ նոր անհատը տեսակ մը պղատանական նոր գաղափար կը ձեւայնէ . եւ որովհետեւ , ամէն գաղափար բուն ճիգ մը կ'ընէ՝ երեւոյթներու աշխարհին մէջ ի յայտ գալու համար , պատճառականութեան օրէնքին կողմէ բաշխուած նպատակաւոր նիւթը ձեռք անցընելու նպատակով , նմանապէս մարդկային անհատականութեան մը այդ մասնաւոր գաղափարը ուժգնօրէն , ծայրայեղ խանդով մը կը ձգտի իրականանալ : Այդ կորովը իսկ եւ իսկ այն տարբանքն է զոր երկու ապագայ ծնողքներ կը զգան իրարու նկատմամբ : Անհուն աստիճաններ ունի ան , որոնց երկու ծայրագոյն կէտերը կրնան կոչուիլ՝ սոլոռախան սէր ու ասոռաւաւան սէր . գալով սիրոյ էութեան՝ ամէն տեղ է ան եւ միշտ համանման : Իր այլազան աստիճաններուն մէջ՝ Սէրը ո՛րչափ անհատականացած ըլլայ , այնչափ աւելի դժուար կերպով ի յայտ կու գայ . ուրիշ խօսքով՝ սէրը այնքան աւելի ուժգին կը դառնայ, որքան սիրուած էակը կարող ըլլայ իր բովանդակ ձիրքերով ու մասնաւոր վիճակներով այլամերժօրէն դժնացում տալու այն ինքնայատուկ իղձին եւ որոշ պէտքին՝ զոր կինը առաջ բերած է զինքը սիրող մարդուն մէջ :

Սէրը , իր էութեամբը ու առաջին շարժումովը , դէպի գեղեցկութիւն , դէպի ուժ , դէպի առողջութիւն եւ դէպի երիտասարդութիւն կը ձգտի . չէ՞ որ այդ բաներուն արտայայտութիւնն է սէրը , քանի որ կամ-

քը , ամէն բանէ առաջ , կ'ուզէ տեսլծիկ ապրելու տառակ էակներ , մարդկային ցեղին ամբողջական նկարագիրով օժտուած . սովորական սէրը առկէ անդին չանցնիր : Ետքէն կու գան ուրիշ պահանջումներ , աւելի մասնաւոր , որոնք կը մեծցնեն ու կ'ամրապնդեն տարիանքը : Երկու էակներու կատարեալ յարմարութեան մէջ միայն զօրաւոր սէրը գոյութիւն կրնայ ունենալ . . . : Եւ որովհետեւ բոլորովին համամասն երկու անհատներ չէ կարելի գտնել , հետեւաբար իւրաքանչիւր մարդ պէտք է որ և է կրն՝ մօտ փնտռէ . այն յատկութիւնները , որոնք լաւագոյն կերպով կը համապատասխանեն իր անհիմնադատկութիւններուն , միշտ ծնւելիք դաւակներուն տեսակէտով : Ո՛րչափ հազուադէպ ըլլայ այդ հանգիստը , նոյնչափ հազուագիւտ կը դառնայ ճշմարտագէտ խանդավառ սէրը : Ճիշդ այդ պատճառով է որ՝ մենէ իւրաքանչիւրը իր մէջ կը կրէ այն մեծ սէրը , որուն նկարագրութիւնը կ'ընեն հանճարեղ բանաստեղծները : Ճիշդ այդ պատճառով է որ սիրոյ այդ կիրքին այլամեթ նպատակակէտը կը ձեւացնեն ապագայ էակը և անոր յատկութիւնները . այնպէս որ բարեկամ ու հաճելի երիտասարդի մը ու աղջկան մը միջև կրնայ գոյութիւն ունենալ զգացումի , նկարագրի և միտքի համակրութիւն մը , որ սիրոյ հետ կապ չունեցող բարեկամութիւն մը առաջ բերէ . նոյն իսկ կրնայ ըլլալ որ սիրոյ մասին ճշմարիտ համակրութիւն մը զգան իրարու . նկատմամբ : Այդ տեսակ միութենէ մը ծնած դաւակը զուրկ պիտի ըլլայ մտաւորական ու ֆիզիքական ներգաշնակութենէ . մէկ խօսքով՝ իր կեանքը և կազմութիւնը չպիտի համապատասխանեն այն ծրագրին՝ զոր կ'առաջադրէ ապրելու կամքը՝ մարդկային ցեղին շահուն տեսակէտով : Ընդհակառակը՝ կրնայ պատահիլ որ՝ հոն առանց զգացումներու , նկարագրի և միտքի անհամաձայնութեան , հակառակ ատկէ առաջ եկած խորշանքին ու հակակրօնութեան , սէրը ծնի ու յարստեւէ , երբ այս վերջինը կուրօրէն չի տեսներ այդ անհաշտութիւնները : Սակայն այդ տեսակ պայմաններու մէջ կնքուած ամուսնութիւն մը անպատճառ դժբաղդ վերջաւորութիւն մը կ'ունենայ :

Հիմա իրերուն խո՛րը թափանցինք : Եսասիրութիւնը իւրաքանչիւր մարդու մէջ այնչափ խոր արմատներ ունի որ՝ եսասիրական շարժումի ներուն վրայ միայն կարելի է յոյս դնել վստահօրէն , էակի մը անհատական գործունէութեան գրգիւ տալու համար : Դրաւ է որ մարդկային սեւը աւելի կ'անխաղոյն , աւելի անմիջական և աւելի մեծ իրաւունք մը ունի անհատին վրայ՝ քան թէ վաղանցիկ անհատականութիւնը : Սակայն երբ պէտք կ'ըլլայ որ անհատը գործէ և զոհուի մարդկային ցեղին պահպանումին ու զարգացումին համար , իր իմացականութիւնը՝ անհատական աննշանքներով տողորուած՝ հազիւ կ'ըմբռնէ այդ զոհողութեան և անմիջապէս անոր համակերպելու պէտքը : Իր նպատակին համեմու համար՝ բնութիւնը կը պարտաւորուի որ և է պատրան-

